որ Մոլտաւիացի եւ Թրանսիլվանիացի Հայոց ի Սգանիսլաւ հաստատուելու տարին կը դնէ 1662։ — 51 Schmidt, անդ, էջ 118։

(Շարունակելի։)

# ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

## ՔԱՆԻ ՄԸ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԵՐՈՒ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հայերէնագէտ գաղղիացի գիտնականն A. Meillet Փարիզի Լեզուագիտական Ընկերութեան Յիշատակագրոց մէջ[1] հրատարակած է ձայնագիտական տեղեկութիւններ, որոնց մէջ ի մասնաւորի կը քննէ "համրափակ նշանագիրք (les occlusives sourdes) հայերէնի մէջ." եւ ապա քանի մը հայերէն բառերու ստուգաբանական մեկնութիւնք կը դնէ։ Առաջին մասին մէջ, որ զուտ ձայնագիտական նկարագիր ունի եւ միայն ձայնագիտաց համար կարեւոր կրնայ ըլլալ, այս հետեւութեան կը հասնի հեղինակը՝ թէ հնդեւրոպական p. t. k₂ հայերէնի մէջ փ. թ. ք կը դառնան (առանց հաշուելու քանի մը զարտուղի դէպքեր.) եւ թէ "այս օրէնքով հայերէն լեզուի յօդափոխութիւնը (Lautverschiebung) կատարելապէս ընթացակից կ'ըլլայ գերմանական ձայնափոխութեան։" Ես գերանուան ստուգաբանական մեկնութիւնն այսպէս կու տայ. "Ծանօթ է որ եւրոպական g₁ = հնդկերէն g₁h- հայերէնի մէջ ձ կ'ըլլայ. այսպէս մեծ = յուն. μέγας, սանսկր. mahánt-; ծնօտ = յուն. γένυς, սանսկր. hánu-; բայց երբ յուն. ἐγώ, սանսկր. ahám բառերու դիմացն հայերէն ես կը գտնենք՝ ուրոյն կանոն մըն է այս, այսինքն հայերէնի մէջ ձ ձայնը բաղաձայնի առջեւ կ'ըլլայ ս։ Համեմ. կէծ եւ կոկէծ. կը գտնենք նաեւ "գերեսցես" (= *գերեցցես) "կերեցէց" ձեւի դիմաց։ Այսպէս ես յառաջ եկած է բաղաձայնէ յառաջ գտնուող *եծ ձեւէ։ Եթէ *eg₁h ձեւէ մ'ենթադրենք՝ *եղ ձայնը կը ծնանէր, որ կրնար ըլլալ. համեմ. ինձ, մեզ, սանսկր. máhyam եւ լատ. mihi (*meg₁hi.)"

Ասկէ զատ եօթը հայերէն բառերու ստուգաբանութիւնք կը դնէ հեղինակն իւր գրութեան մէջ, որ են. "1. Ընդ եւ ըստ հնագոյն *ընդ եւ *ուստ ձեւերէ կրնան յառաջ գալ իբրեւ նախակից ձեւեր (formes proclitiques). համեմ. "ի վերուստ," "յերկնուստ" եւն, որ կը ցուցընեն *ուստ հնագոյն ձեւն եւ անոր նախնական նշանակութիւնը իբր = "սկսեալ, անդստին ի"։ Իսկ *ընդ եւ *ուստ դիւրաւ կրնան հնդեւրոպական *entos (յուն. ἐντός) եւ *ut'tos (*ud-մասնիկ -*tos) ձեւերէն հանուիլ։ 2. Առ մասնիկը մերձաւորութիւն կը նշանակէ։ Կրնայ կարծուիլ որ աւելի հնագոյն նշանակութիւնն էր "առջեւը," ինչպէս առաջ բառը։ Այն ատեն պէտք է յունարէն πρὸ եւն բառերու ընտանեաց մերձեցընել. -առ- անշուշտ r̥ կը ներկայացընէ. իսկ սկզբան p եւ ոչ հետք թողուցեր է։ 3. Մերձ. համեմ. յունար. μέχρι. 4. Յ. համեմ. սանսկր. acha. Սկզբան ձայնաւորն ինկած է, ինչպէս նաեւ ի չ, որ նախակից (proclitique) ձեւ է ոչ ժխտականին. չ կը համեմատի սանսկր. -ch-, ինչպէս այց համեմ. սանսկր. ichá. (Տես de Lagarde, Arm. Stud. nº 2257.) 5. Դուկկէ (Beitr. zur etym. Erläut. der Arm. Spr. p. 23 եւ 24) կը քննադատէ "է վեր" բառին ստուգաբանութիւնը, զոր կ'առաջարկէ Հիւպշման (սանսկր. várṣman, լիթ. wirszùs եւն)։ Ըստ Դուկկէի հնդեւրոպական -rs- կ'ըլլայ ի հայ -ռ-. բայց այս օրինաց համար ի վկայութիւն բերուած երկու նառասփ եւ մառանոց բառերու մէջ ռ է ր գրի տեղ յաջորդ ռնգականին պատճառաւ։ Թէ ճիշդ է հայերէն այս բառը լիթ. wirszùs եւն բառերու հետ համեմատելը՝ հաւանական կ'ընէ վեր (ի վերայ քան) մասնիկը. գիտենք որ հնդեւրոպական սկզբնատառ w հայերէն գ կ'ըլլայ, իսկ երկու ձայնաւորաց մէջ եղած w կ'ըլլայ վ։ 6. Ծուռ. համեմ. յունար. γύρος. 7. Երեւիմ. համեմ. յունար. πρέπειν (երեւելի ըլլալ. նմանիլ։)"

Այս հատածին մնացեալ մասերը հայերէնի հետ կապ չունին. այլ յունարէն եւ լատին լեզուաց համար քանի մը դիտողութիւնք են։

Հ. Յ. Տ.

[1] Mémoires de la Société de linguistique de Paris. Tome VII, Fascicule II. Paris, 1890 pp. 161—167: Notes de Phonétique par A. Meillet.

# ԳՐԱԿԱՆ

## ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳԻՐՔ ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳՐԱՏԱՆ

(Շարունակութիւն։)

### 6.

[Cod. Arm. 6.]

ՌՃԼԳ = 1684 (*)

*ԹՈՒՂԹՔ 132: — ՄԵԾՈՒԹԻՒՆ 14,5×10,5 cm. — ԳՐՈՒԹԻՒՆ միասիւն 9,5×6 cm. — ՏՈՂՔ 19: — ՆԻՒԹ. մագաղաթ ողորկ եւ մաքուր: — ԿԱԶՄ. կաշեկազմ, ոսկեզարդերով, մէջտեղը խաչ, եւ թիկունքը ոսկեգիր դրոշմուած N. 574: — ՀԱՆԳԱՄԱՆՔ. ընդհանրապէս լաւ, բայց տեղ տեղ քաւական վնասեալ: — ԳԻՐ. բոլորգիր մաքուր, տեղ տեղ շատ մանր եւ գեղեցիկ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ շատ բազմաթիւ եւ գեղեցիկ ոսկւով եւ այլ կենդանի գոյներով: ԽՈՐԱՆՔ կան երկու, ԿԻՍԱԽՈՐԱՆՔ կան հինգ: ՆԿԱՐՔ թուով երկու, մեծ. ամէնն ալ գեղեցիկ, գոյնք այլեւայլ, կայ եւ ոսկի: ՍԿԶԲՆԱՏԱՌՔ կարմրաւ են: — ԺԱՄԱՆԱԿ. ՌՃԼԳ (= 1684) (*): — ԳՐԻՉ. Կ'երեւայ Մովսէս վարդապետ: — ՏԵՂԻ. Էջմիածին: — ՏԷՐ. Գրատուն Էջմիածնի (Նուէր գրչին): — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. թղ. 4a, 23a, 131a, 132a, 132b. — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ: Առաջին (դատարկ) թղթին եռեւ գրուած է.* Rituale est; Ceremoniale Episcoporum Armeniorum, Armenicè scriptum, quod Ser. Archiducj Austriae Carolo Leopoldj Magni ex Magdalena Ducissa Neoburgica filio in vigilia SS. trium Regum praesentavit Narcissus Elachedj Capellanus Caesareus Armenus 1697. *(Մաշտոց, ծիսարան եպիսկոպոսաց Հայոց, գրեալ ի հայ բարբառ, զոր Օգոստ. Արքիդքսի Աւստրիայ Կարոլոսի՝ որդւոյ Լէոպոլդոսի Մեծի ի դքսուհի տիկնոջէն Մակտաղենայ Նէոբուրգացւոյ՝ յառաջնում աւուր (ի նախատօնակի) տօնի Երից Մոգուցն՝*

նուիրեաց Ներսէս Elachedj Հայ յազգէ, մատրանապետ Կայսեր։) Ծնս վարը Ցիշատակարանին 4։

* Մատեան է Մաշտոց. (ուստի նոյն ընդ Թ. 5։) Միայն թէ աւելի սակաւ են թուով աստ մէջ գտնուած կանոնք, նուազ կատարեալ քան զառաջինն։ Երկուքին կարգն ընդհանրապէս նոյն։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ։ 1. Թղ. 4a. "Դարձեալ աղաչեմ զձեզ ով ընթերցող հայրք եւ եղբարք յիշեցէք զմեղապարտ սուտանուն Մովսէս Վարդապետ եւ զծնողքն իմ զՅովհաննէս եւ զՍտեփաննէս, եւ դուք յիշեալ լիջիք" եւն։

2. Թղ. 23a որ է կրկնութիւն յիշատակարանին ի թղ. 131a վարը. "Փառք ...։ Արդ գրեցաւ մաշտոցս լաւ եւ ընտիր ...[1] որ եւ եղուկ եւ ամենեցուն ծառայ. տէր Աստուած Յիսուս Քրիստոս արարիչ արարածոց. երկնի եւ երկրի. թողութիւն շնորհեա զմեղաւոր եւ անարժան եւ անիմաստ ծառայ ստացողի ... (տող մը ջնջուած) ստացող շնորհաւոր անուամբ միայն եմ քր ... (հինգ տող ջնջուած) անուանէ։"

3. Թղ. 132a, մեծ գրով. "Փառք ... Արդ երեսանկեալ աղաչեմ... որք հանդիպիք տեսութեան սուրբ գրոյս կարդալով կամ օրինակելով յիշեցէք յաղօթս ձեր ... մեղապարտ եւ անարժան սուտանուն Մովսէս վարդապետս եւ զծնողքն իմ զՅովհաննէսն եւ զՅուստիանէն. եւ իւր առաւօտեան մերձաւորացն հոգոց իւրոց. եւ Նա յիշատակ ի տուն սուրբ Էջմիածնայ. եւ որ մի հայր մեղայիւ ...։ Թվին ՌՃԼԳ (=1684։)

4. Թղ. 132b կնիք կայ դրոշմուած, ապա երկու դատարկ թղթէ ետքը հակառակ դիրք չորս տող գրութիւն մ'անընթեռնլի եւ ջնջեալ։ Նոյնպէս թղ. 3։

> Այս կնքոյ համար կայսերական գրատան ձեռագիր ցուցակին մէջ կը գրուի. "Ձեռագիրքը Նոֆալեանէն յառաջ կայր. եւ Արք. Գրատան մէջ մտած էր, ինչպէս թղ. 3 եւ 132b դրոշմուած կնքէն յայտնի է։" — (Հմմտ. Թիւ 3։) Յիշատակարան 2էն կրնայ թերեւս հետեւցուիլ, որ ձեռագիրս շատ աւելի հին է քան ՌՃԼԳ թուականը, բայց ապացուցութեամբ ըսել չենք կրնար։
>
> Ստեփանոս Ռոշքա (Ժամանակագրութիւն, 1695) կը գրէ. "Ներսէս վարդապետն Երեւանցի (կամ որպէս Վ.Վ. Վրացի)։ կանոնիկոսն Վիեննայի, զայսու ժամանակի վախճանի։ Սա ի գպրատանն Ուրբանեան աշակերտեալ, եւ ուսեալ զգիտութիւնս, եւ զի ոչ գոյր ի Հռոմ հայ եպիսկոպոս, յորմէ քահանայ ձեռնադրիւր, գայ ի Լէօպօլիս հրամանաւ Սուրբ Ժողովոյն եւ յԱրքեպիսկոպոսէն Նիկողայոսէ քահանայ օրհնի։ Անտի դարձեալ ի Հռոմ, հանդիպի ի Վիեննայ, յորժամ սաստիկ ժանտամահն էր անդրէն, ուր աներկիւղ պաշտէ զխորհուրդս Եկեղեցւոյ ախտացելոցն ժանտամահուամբն, թաղէ, եւն։ Վասն որոյ Եպիսկոպոսն Վիեննայու, իբրեւ դադարեաց մահն, գիտացեալ զառաքինութիւնն, թոյլատուութեամբ Սուրբ Ժողովոյն առնէ զնա Պենեֆիչիարոս Աթոռական Եկեղեցւոյն Սբ. Ստեփանոսի Նախավկային։ ...[2] առնէ զնա դոկտոր իւրոյ երկոց, որ կոչի ֆոֆիքլան, եւ յետոյ կանոնիկոս նոյն Եկեղեցւոյ։ ....

[1] Դիտմամբ աւրուած 7 տող, եւ վրան տեղ տեղ աննշան իրեր գրուած։

[2] Հոս եւ ուրիշ քանի մը տեղ ինչ ինչ կտորներ դուրս թողած ենք այլեւայլ նկատումներով. զատոնք ուրիշ առթիւ կը դնենք լոյսին։

# 7.

[Cod. Arm. 7.]

ՌՁԷ = 1638

*ԹՈՒՂԹՔ 224։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ 14,5×10,5* cm. — *ԳՐՈՒԹԻՒՆ միասիւն 10×7,5* cm. — *ՏՈՂՔ 15։ — ՆԻՒԹ. թուղթ պինդ, եւ ոչ ողորկ։ — ԿԱԶՄ. կաշեկազմ, եւրոպական։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ. մաքուր պահուած ամբողջը։ — ԳԻՐ. նոր նոտրագիր կամ փետրագիր։ Այլեւայլ ձեռք կը տեսնուին, այսպէս էջ 1, բայց մանաւանդ թղթ. 212—218։ — ԽՈՐԱԳԻՐՔ կարմիր։ ՍԿԶԲՆԱՏԱՌՔ զարդագիր, այլ ոչ գունաւոր։ — ԴԱՏԱՐԿ. թուղթ մը սկիզբն, եւ 1a, 2, 3a, 4, 5, 224b. — ԺԱՄԱՆԱԿ. ՌՁԷ (= 1638։) — ԳՐԻՉ. Յակոբ Երէց։ — ՏԵՂԻ. "Ի քաղաքս Զամօսցա, առ դրան Ս. Աստուածածնին ։" — ՏԷՐ. Պետրոս երէց (որդի գրչին։) — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. 210b.*

* Մատեան է Մաշտոց։ (Հմմտ. Թ. 5։) Միայն 20 կանոնք կան աստ մէջ, ուստի Թ. 5 ինչ ինչ կտոր աւելի ունի։ Կան նաեւ՝

Էջ 1. Ղուկասու աւետարանէ հատած մը "Եւ մտեալ Յիսուս շրջէր ընդ Երիքով" եւն։

Թղ. 3b Յանկ նիւթոց։

Թղ. 6. Ծանուցում Մկրտութեան վրայ։ Հոս կիսախորան մ'անգոյն եւ յուսի։

Թղ. 7. — 210a. կան 20 կանոնք մաշտոցի։

Յիշատակագրութենէ վերջն ուրիշ ձեռքէ մը գրուած։

1. Թղ. 212a. Կանոն պատկեր աւրհնելոյ։
2. Թղ. 214b. Յաւուր փոխման ամենօրհնեալ կուսին Մարիամու օրհնութիւն դալար խոտոյ։
3. Թղ. 217a. Օրհնութիւն նոր տան։
4. Թղ. 218b. Օրհնութիւն ջրոյ։
5. Թղ. 223b. Օրհնութիւն առագաստի։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ։ Թղ. 210b. "Փառք ... որ ետ կարողութիւն ակարութեան ծերացեալ եւ փտեալ մարմնոյս յանդ ելանել սուրբ գրոյս որ կոչի մաշտոց. Արդ գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ Յակոբ Երիցու ի յերկիր Լեհաց ի քաղաքս Զամօսցա, առ դրան սուրբ Աստուածածնին. ի թվականութեանս Հայոց ՌՁԷ ամի ի ժամանակս թագաւորութեանս Լեհաց չորրորդ Վլատիսլաւին եւ Հայրապետութեան սուրբ Էջմիածնա Տեառն Տէր Փիլիպպոս Կաթողիկոսին. Փետրվարի ամսոյ ի ԻԵ. յանդ ելաւ ի խնդրանաց սիրելի որդոյ իմոյ Տէր Պետրոս քահանային. զոր արտասուաթոր մաղթանօք հայցեմ յԱստուծոյ ամենակալէ, զի բարով վայելել տացէ ...։ Արդ՝ երեսանկեալ աղաչեմ զձեզ եղբայրք, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, տացէք աստուած ողորմի մեղաւոր յակոբ իրիցուն եւ որդոյ նորին Տէր պետրոս քահանային։ ... Յայսմ ամի մեռաւ մեծ իշխանն տէր քաղաքիս բան Թումաս զամոյսքին, այր հանճարեղ...։"

# 8.

[Cod. Arm. 8.]

ԺԵ. դար (°)

*ԹՈՒՂԹՔ 239։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ 9×5,5* cm. — *ԳՐՈՒԹԻՒՆ միասիւն 7,5×5* cm. — *ՏՈՂՔ 17։ — ՆԻՒԹ. թուղթ, ողորկեալ, բայց այժմ շատ մաշած եւ խաթարուած։ — ԿԱԶՄ. բովանդակը մէկ դեղնագոյն կաշի*

digitised by A.R.A.R.@

մըն է: — ՀԱՆԳԱՄԱՆՔ. շատ վնասուած, շատ տեղեր մաշած եւ անընթեռնլի եւ նաեւ ցեցակեր. մանաւանդ թղ. 1—4, 40—50, 220—230 եւն եւն: Լուսանցքը շատ տեղ կտրուած, եւ նոր ձեռք մը պակասը գրած: Ինչ ինչ թղթեր նոր ձեռք մը նորոգեր է եւ մաշած գրութիւնն կրկին գրած, որով տգեղ կերպարանք առած է: — ԳԻՐ. մանր բոլորգիր, ոչ մաքուր: — ՎԵՐՆԱԳԻՐՔ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐՔ կարմրաւ: — ԴԱՍՏԱՐԿ թղ. 11a եւ երկու թուղթ վերջէն: — ԺԱՄԱՆԱԿ գրութեան, ԳՐԻՉ մատենիս, ՏԵՂԻ գրութեան եւ ՏԷՐՆ՝ անյայտ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ (կ՚երեւայ). 106, 209a (եւն, եւ ի լուսանցս). բայց ջնջուած եւ անընթեռնլի: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ: Գիրքս նախ էր ի ձեռս Seb. Tengnagelի, որուն էր նաեւ Թ. 1. Առաջին ներքին կողմն գրուած է Libellus Precationum linguâ armenâ.

* Մ՚ատեանս է Ժամագիրք Հայ Դոմինիկեանց. Վերնագիրն կամ Ճակատն (Թղ. 1a) կարմրագիր՝ այսպէս է. "(Ժ)ամագիրք բոլոր տարւոյն ըստ կարգի քարոզողաց եղբարցն Դոմինիկեանց Որոյ սկիզբն է առաջին կիրակէ . . . Տօն ծննդեան" եւն.

Կարգաւ տարւոյ օրերու եւ սրբոց պատշաճք եւ նաեւ առանձին ժամերգութեան մասերը (Թղ. 1a—228.) Հոս յաւելուած գիր մը 7 տող գրեր է գրեթէ անընթեռնլի.

Թղ. 229a "... սըս երեկոյս ժամուն . . . տաց տէր ցտէր իմ." Մինչեւ 239b սաղմոս է.

Լեզուն յոյժ՝ միջինդարեան ոճով, բայց տեղ տեղ բաւական յստակ.

Քարոզողաց Ժամագրոց (տպ. Վենետ. 1714.) հրատարակութեան մէջ (էջ 122) կը յիշուի որ նախկին թարգմանողն էր Երանելին Բարդուղիմէոս (յամի 1333). Բայց նորոգեր է եւ նոր տօները թարգմաներ Գրիգոր Ծործորեցի (յամի 1656) եւ վերջապէս երրորդ անգամ նորոգութիւն եւ թարգմանութիւն եղած է ձեռամբ "Պատրի Պետրոսի" եւ "Պատրի Գրիգորէսի" (յամի տպագրութեան.) Մեր ձեռագիրն ապահովութեամբ չէ երրորդ թարգմանութիւնը. ինչպէս ճակատի լեզուն իսկ կը ցուցընէ եւ այլ պարագայք, մանաւանդ թէ կարծենք եւ ոչ 1656ի թարգմանութիւնը. Այս թուէն ալ հին կ՚երեւայ մեզի ձեռագիրը, եւ առ նուազն ԺԵ դարու գրութիւն.

## 9.

[Cod. Arm. 9.]

ՌՁԴ = 1635

ԹՈՒՂԹՔ 186: — ՄԵԾՈՒԹԻՒՆ 11,5×9 cm. — ԳՐՈՒԹԻՒՆ միասիւն 7×5 cm. — ՏՈՂՔ 15: — ՆԻՒԹ. մագաղաթ, ողորկեալ եւ փայլուն: — ԿԱԶՄ. կաշեկազմ արեւելեան ոճով: — ՀԱՆԳԱՄԱՆՔ. ընդհանրապէս մաքուր եւ անարատ պահուած: — ԳԻՐ. բոլորգիր, մաքուր, միատեսակ: — ԶԱՐԴԱԳՐԵՐՈՎ լի, որոնք պարզ, բայց բաւական գեղեցիկ են: Առաջին տողք մանուշակագոյն եւ երկրորդ տողք կարմրագիր են, նոյնպէս ՍԿԶԲՆԱԳԻՐՔ փոփոխակի մանուշակ, կարմիր եւ կապոյտ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ կան ամէն հատածի սկիզբն մանր եւ գեղեցիկ, այսպէս թղ. 2a, 48b, 60a, 84a, 119a, 132a եւն: — ԽՈՐԱՆՔ կան թղ. 2a, 60a, 84a, ԿԻՍԱԽՈՐԱՆՔ թղ. 48b, 119a, 132a, 138a. — ՆԿԱՐՔ. թղ. 1b վրան գրուած "Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ". գոյները տկար: Թղ. 44a նկար եպիսկոպոսի: Թղ. 56b նկարին վրայ գրուած "Քահանայապետ Յիսուս Քրիստոս": Զգեստը ծիրը լոփինաջան պատարագի զգեստ է, եւ վրան գլխու թագը արեւելեան՝ կլոր ճղներով: Շապիկը կապոյտ, որուն վրայէն փորուրարի ծայրերը կը տեսնուին: Թղ. 68b նկար զգեստու (լատինական): Թղ. 82b Նկար Ս. Աթանասի՝ յունական զգեստուր: Նկարներու առջեւ գոյնզգոյն թղթեր ագուցուած են: Թղ. 159a Վարդապետ մը: Թղ. 93a Հոգին սուրբ, եւն: — Կան ԹՌՉՆԱԳԻՐՔ եւ զազանանկարք, այսպէս թղ 2a, 29a, 89a, 122a եւն: — ԴԱՍՏԱՐԿ թղ. 179b, 182a եւ 186b եւ վերջը (թղ. 175 եւ 179էն ետքը): — ԺԱՄԱՆԱԿ.) ՌՁԴ (= 1635): — ԳՐԻՉ. Ակնեցի Յակոբ դպիր: — ՏԵՂԻ. Կ.Պոլիս, ընդ հովանեաւ սուրբ հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: — ՏԷՐ. Գասպար երէց: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. թղ. 13b, 37a, 42a, 118b, 131a, 176b, 179b, 183a, եւ այլ կամ անշանակ կամ անընթեռնլի լուսանցագրութիւնք եւն: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ: Ձեռագիրս գնուած է կայսերական Գրատան համար՝ յամի 1849: (Suppl. 447b.)

* Մ՚ատեանս է բուն Ժամագիրք. Վերնագիրն է (1a) "Կարգաւորութիւն հասարակաց աղօթից եկեղեցեաց Հայաստանեայց. Որ կատարի ի մէջ գիշերի ի դէմս հօր Աստուծոյ. Արարեալ Լուսաւորչին Գրիգորի. Եւ Սահակայ հայրապետին. եւ Մեսրոպայ վարդապետին. Եւ Գիւտայ. Եւ Յովհաննու մանդակունւոյ. Հայրապետացն մեր. Եւ այլոց վարդապետաց. ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհնեալ յաւիտեանս ամէն":

Թղ. 1a. Գիշերային (Աղօթք եւ Քարոզք).

Թղ. 14a. Առաւօտեան.

Թղ. 37a. Արեւագալ.

Թղ. 44a. Ճաշու (մինչեւ թղ. 55b). (Մեծ Քարոզք.)

Թղ. 119a. Երեկոյեան: — Թղ. 130. "Աւրհնութիւն մարմնաւոր սեղանոյ."

Թղ. 132a. Խաղաղական.

Թղ. 138a. Հանգստեան. — Թղ. 141a. "Ընկալ քաղցրութեամբ." եւ թղ. 148b. "Հաւատով Խոստովանիմ."

Բաց աստի կան մէջը.

1. Թղ. 57b, 10. "Աւրէնք աւրհնելոյ [illegible] եկեղեցւոյ."

2. Թղ. 62b. Պատարագ (համառօտութեամբ, առանց խորագրի, իբրեւ շարունակութիւն նախընթացին). Բայց ընծայմանէն ետքը կը կրէ այս անունը (Թղ. 82a, 7.) "Պատարագամատոյց Զոր արարեալ է սրբոյն Աթանասի Աղեքսանդրու հայրապետին". Վերջ՝ թղ. 112b.

Հմմտ. Թիւ 27.

3. Թղ. 113a, 10. "Այլ աղօթք որ ասի նախ քան զճաշակել խորհրդոյն ի ջանիցն Բոլմայէ առաքելոյ."

4. Թղ. 114b, 6. "Յետոյ Ներսէսի Լամբրոնացւոյ ասացեալ խրատք եւ սահման վերջագրեալ գործոյ." Սկիզբն. "Քանզի բազում ինչ եցոյց բան հրահանգութեան գործ սարկաւագացն աստիճանի" եւն. Վերջ՝ 119a.

5. Թղ. 155b. "Մեղայ ամենասուրբ երրորդութեանն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ. մեղուցեալ եմ Աստուծոյ." Աղօթք խոստովանութեան, Բանաձեւք եւն.

6. Թղ. 159a, 7. "Եռամեծի եւ քաջ վարդապետի Մխիթարայ Գոշի խրատկրօն ճգնաւորի. Եւ

digitised by A.R.A.R.@

բանիբուն Հռետորի։ Առացեալ ղողօքն ի ժամ տօնիցս ողորմութեանն։„ Սկիզբն. "Տէր աստուած իմ յիսուս քրիստոս բան հաւր եւ կերպարան կենդանի„ եւն։

Գիրքը կը լմննայ Թղ. 175b, բայց պակաս է, այսպէս աւարտելով. "Բայց զակն քո ամենատես որ ոչ ննջէ։ եւ կարկա . . . ։„ Դիմացի էջը յիշատակարան։

7. Թղ. 183a—186. Հաւատամք եւ այլ մասունք ինչ աղօթից պատարագի։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 13b, 13. "Գրեցաւ ի Թվականիս. ՌՁԴ. ամին. յուլիսի ամսոյ. ա. օրն դշի։ Ձեռամբ Յովսէփ դպրի. ի վայելումն սրբասնունդ Գասպար քահանային։„

2. Թղ. 37a. "Ով դասք սրբազան քահանայից. եւ հայրք մանկանց նորա եկեղեցոյ. երես անկեալ աղաչեմ զձեզ. որք հանդիպիք սմա կարդալով կամ գաղափարելով . . . յիշեցէք . . . զստացաւղ սորա զԳասպար քահանայն. եւ զծնողսն իւր. ընդ նմին եւ զգրիչս Յակոբ եւ ծնողաց իմոց. աստուած ողորմի ասացէք„ եւն։

3. Թղ. 42a. Աննշանակ չորեքտողեան տառնաւոր. "Զթախծեալս հոգւով եղբայր յիշեա„ եւն։

4. Թղ. 118b, 9. "ԶՅակոբ տառապեալս հոգով . . . աղաչեմ յիշել ի տէր. եւ խնդրել թողութիւն բազմամեղ անձին իմոյ, այլ եւ հոգեւոր եղբայրակցին իմոյ Գասպար քահանային։ զի ջանիւ նորին, եւս եւ բազում աշխատութեամբ մերով սկսաք գրել զգիրքս՝ յիշատակ ի ձեռս նորա.„ եւն։

5. Թղ. 131a. չորեքտողեան, նման 3ին։

6. Թղ. 176a. Գլխաւոր յիշատակարան. "Փառք . . . ։ Աստանաւր գրեցաւ եւ զրաւ առեալ կատարեցաւ տառս աստուածային որ ասի խորհրդատետրոյց ի լաւ եւ յընտրոյ աւրինակէ որ էր ուղղեալ ի մեծ րաբունապետէն Թովմայ վարդապետէ։ որպէս եւ տառքն յիշատակարանն ցուցանէ։ ի Թվականիս Հայոց։ ՌՁԴ. յուլիսի ԻԲ. Յերկիր Թրակիոյ. ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս. ի պատրիարգութեան սուրբ Էջմիածնայ աթոռոյն Տեառն Տէր Փիլիպպոսի։ եւ յեպիսկոպոսութեան քաղաքիս տէր Գրիգորի կեսարացոյ . . . ։ ընդ հովանեաւ սուրբ հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի։ Ձեռամբ [illegible] Յովսէփ դպրի։ ի լաւ եւ յընտրոյ աւրինակէ զոր փոխափոխեալ էր Ներսէս վարդապետն աշակերտ մեծին Թովմայ վարդապետին. յառաջին աւրինակէն, զոր ինքն աստուածաբան րաբունեաց պետն Թովմաս գրեալ էր աշխատութեամբ աստուածանուէր անձին եւ սրբագրեալ ամենայնիւ յառաջնմէն մինչեւ ցվերջին նշանախեց վասն օգտութեան եւ բարեզարդութեան . . ։ Որ եւ այսմ բանիւ տենչմամբ փափագեալ բազում ջանիւ եւ գաղափարել զսուրբ մատուցարանս զայս աստուածատուր եւ բարեպաշտ քահանայն Գասպար ի վայելումն անձին իւրոյ եւ յետ ելանելոյ ի կենցաղոյս եղիցի հոգւոյ իւրոյ յիշատակ, եւ ծնաւղացն մահտեսի տիրատուրին, եւ մահտեսի փանոսին, եւ եղբարցն Տէրտէրին եւ Պօղոսին. քուերն Մարգարիտին, եւ պսակակցին զաւակին Յովսէփին. եւ ամենայն արեան մերձաւորացն կենդանեաց եւ հանգուցելոց։ Արդ երես անկեալ . . . ։ Պաղատեալ եւ յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զհոգեւոր ծնողն եւ զվարժապետ սորա զերջանիկ րաբունապետն զԳրիգոր դարանաղեցի վարդապետն . . . նա՛ եւ զօրինակ սուրբ գրոյս շնորհեաց (Գրիգոր) . . . ։„ (Ի բնօրէն ծանօթագրող յարէ.) "Այլ եւ գրչիս ողորմելոյ եւ անարժանութեան անմեղագիր լերուք, զի ի դառն ժամանակի գրեցաւ . . . եւ թէ գտանի սղալ որ ոչ իմացաք գիտնոցդ մաղթեմ կրկին ուղղել։ Եւ աշխատաւորացն ի սոյ վարձս բազումս տացէ„ եւն։

"Յայսմ ամի Թվին. ՌՁԴ. ղղուրխոմն տամզօլու նորոգեցին։„

7. Թղ. 179b նոր ձեռք մը հինգ տող գրեր է բան մ'անընթեռնլի։

8. Թղ. 183b վերը լուսանցքի վրայ կնիք մը դրոշմուած է. "Ֆ (փող) . . . ծռ (ծառայ) 2 . . . ԷՈՒ ՌԳ(ᵒ) 3 . . . Քրիստոսի Աստուծոյ։„

*Բացի թիւ 8էն, կայ երկրորդ օրինակ մ'ալ ժամագրոց (Թիւ 19։) Նկատմամբ Պատարագամատուցի հմմտ. թիւ 27։ Հին ձեռագրաց մէջ գրեթէ միշտ Ճաշու ժամէն ետքը գրուած կ'ըլլայ նաեւ Պատարագը, ինչպէս հոս։ Բայց նաեւ ասոնց ձեռագիրք բաւական այլայլութեամբ կ'ըլլան, ոմանք համառօտեալ, այլք այս կամ այն մասը միայն ունենալով։*

## 10.

### [Cod. Arm. 10.]

### ՊԺԳ = 1364

*ԹՈՒՂԹՔ 319 (էջք 333։) — ՄԵԾՈՒԹԻՒՆ* 13×9 cm. — *ԳՐՈՒԹԻՒՆ միասիւն 10,5×7* cm. — *ՏՈՂՔ 20։ — ՆԻՒԹ. թուղթ, պինդ եւ ողորկ։ — ԿԱԶՄ. փայտակազմ կաշեպատ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ. լաւ։ — ԳԻՐ. բոլորգիր միջին մաքրութեամբ, այլեւայլ ձեռքէ, այսպէս թղ. 127—131 եւն եւն։ — ԽՈՐԱԳԻՐՔ եւ ՍԿԶԲՆԱՏԱՌՔ կարմիր։ Կան նաեւ քանի մը ԶԱՐԴԱԳԻՐՔ. իւրաքանչիւր գլխաւոր գրութեանց սկիզբը ԿԻՍԱԽՈՐԱՆՔ եւ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ։ — ԴԱՏԱՐԿ. 13 թուղթ վերջէն, եւ թղ. 157b. — ԺԱՄԱՆԱԿ. ՊԺԳ (= 1364)։ — ԳՐԻՉ. Անանիաս։ — ՏԵՂԻ. "ի գաւառս Եկեղեաց, յանապատս որ կոչի Սուրբ Կիւրակոս։„ — ՏԷՐ. Նորոգէս քահանայ։ — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ.* 17a, 126b, 144b, 148b, 156a, 181a, 239b, 259a, 299b, 318b. *որոնք կրկնութիւնք են մեծաւ մասամբ, ինչպէս նաեւ այլ լուսանցագրութիւնք։*

Մատեանս է ժողովածոյ, որուն մէջ կան.

* 1. Թղ. 1a. Յիսուս որդի. սկիզբն կարմրագիր "Տեառն Ներսեսի կաթողիկոսի Հայոց նուէր մաղթանաց՝ ներշնչման տաղիւն, Տուողին բանից, ընծաւմն աղաւթից եւն։ Յիսուս որդի Հօր„ եւն։

Թղ. 96b կը լմննայ, ուր կայ "Յիշատակարան երգողի բանիս„ ։

"Ի վեց հարիւր Հայոց թուական
Եւ յառաջին սկսեալ նոր ամ
Բանիս գրեցաւ աղաւթական„ եւն։

Մինչեւ Թղ. 100b.

* 2. Թղ. 101a. "Տեառն Ներսէսի սրբոյ եւ Տիեզերական վարդապետի եւ կաթուղիկոսի Հայոց։ Յաղագս երկնի եւ զարդուց նորա ի գիտնոց նորին բարառնաբար ի չափ երկոտասանիցն պարզեալ ոտից. ի խնդրոյ տեառն բժշկապետի եւ աստեղագիտի. Մխիթար կոչեցեալ։„ Սկիզբն. "Եմեղական գոլով բնութիւն եւ սկզբնական ‖ ի յանեղէն ձգեալ համար անզուգական։„

* 3. Թղ. 108b. "Նորէն ի խնդրոյ անուան նախագիծ Տաղիս տանց ասացեալ։„ Սկիզբն.

"Միշտ էիդ անեղ բնութիւնք բնաւորեցան
Աննզիդ անմահութիւնք հեռեւեցան։„

digitised by A.R.A.R.@

Տողերու սկզբնագրերը կը կազմեն խնդրողին անունը, այսինքն ՄԽԻԹԱՐ ԲԺԻՇԿ ԸՆԿԱԼ Ի ՆԵՐՍԻՍԷ ՁԱՅՍ ԲԱՆ։

4. Թղ. 110b. “Նորին բան ներբողական ի խորան օգնոց համայնից. ի դիմաց մերային տառից տանց. Ցիւրաքանչիւր քառից։„ Սկիզբն. “Այրն Աստուծոյ դքեզ մերձակայ։„ Տունք ՃԾ։

* 5. Թղ. 118a. “Նոյնին բան հաւատոյ վասն անեղին եւ եղելոյ. Բարառնաբար ի դիմաց հայկական տառից, Զափաբերմամբ ոգեալ ի Ներսիսէ„։ Սկիզբն. “Այրն անսկիզբն ասէ զԱստուած։„

* 6. Թղ. 122a. “Տեառն Ներսէսի ասացեալ բան. ի խորոց մանկանց ուսումնասիրաց՝ ի դիմաց այբուբենից Տառից՝ ոտանաւոր չափով։„ Սկիզբն. “Այրն առաջին դքեզ տղայ։„ Տունք Ձ։

* 7. Թղ. 127a. “Վասն բարկացողաց եւ հպարտից. է հոգւոյ չարոյ։„ Սկիզբն. “Ցորժամ կամիցին փառաւորել դքեզ դեւքն։„

8. Թղ. 130b. Վարի կողմը գրուած է. “Է Լուծմանց է բանս։„ “Ցորժամ քակես զփառաւորութիւն։„ Հինգ տող բան մը, եւ ապա “Զառկաւ գիրս կարդա սիրելի եղբայր եւ զմեղաւ հողս յիշեա„ եւն։

* 9. Թղ. 131a. “Երանելոյն Յովհաննու Մանդակունւոյ բան խրատու առ ճգնաւորսն։„ Սկիզբն. “Քանզի գրեալ է եւ պատուիրեալ։

10. Թղ. 134a. Նորին “Վասն վարդապետաց։„ Սկիզբն. “Ոչ գտանի վարդապետ խոնարհ։„

Այս ճառը չի գտնուիր Վենետկոյ 1860ին հրատարակութեան մէջ։

11. Թղ. 145a. “Դաւանութիւն հաւատոյ։„ Սկիզբն. “Խոստովանիմք եւ դաւանիմք զսուրբ Երրորդութիւնն եւ զմի Աստուածութիւնն լի եւ անթերի։„

Ասոր իբր մաս կամ շարունակութիւն գրուած է յաջորդը

12. Թղ. 148b. “Տառաքանեան պատգամք։„

Տասնուհինգ տող կտոր մը։

13. Թղ. 149a. “Հարցումն թէ քանի՞ է բեւեռք խաչին եւ ո՞ր է անզիքն. պատասխ. ինն է„ եւն։ Վեց տող կտոր մը։

14. Թղ. 149a. “Այլ բան հաւատոյ։„ Սկիզբն. “Իւեթիւ իմանի հոգով դաւանի եւ խոստովանի։ Ջերմ հուր յերկաթի։„

15. Թղ. 149b. “Ճշմարիտ խոստովանութիւն զոր պարտ է խոստովանողացն տալ առաջի քահանային որ է ի գլուխ։ եւ որպէս պարտ է խոստովանել զոր մեղաւ„ եւն։ Սկիզբն. “Եթէ խոտորեցաւ սիրտ իմ ի պաշտաւնս այլոց այլազգեաց։„

Հմմտ. Թիւ 9, 5։

* 16. Թղ. 153a. “Հարցումն Աշոտոյ ... ։ Եւ պատասխանի Եզնոյ վարդապետի կողբացւոյ։„ Սկիզբն. (Աշոտ կը հարցնէ.) “Զի՞նչ է առաջաւորութեանն (երկու տող աւրուած,) խորհուրդն անպատարագ։„

17. Թղ. 158. “Սուրբ Վարդապետին Գրիգորի Սկեւռացւոյ աղաւթք ի սուրբ Երրորդութիւնն Աւարտեալ ի բանն։„ Սկիզբն. “Աւրհնեալ ես ամենասուրբ Երրորդութիւն անեղ էութիւն։„

18. Թղ. 181a. “Նորին սուրբ Վարդապետին Գրիգորի Աղաւթք ի վերայ ութ խորհրդոյն։„ Սկիզբն. “Անսկիզբն Աստուած անեղ, աներբ, անժամանակ։„

19. Թղ. 240a. “Նորին Գրիգորի վարդապետի։ Աղաւթք որ ի խորհրդական ժամու սրբոյ եւ մեղսաքաւիչ խորհրդոյն մատուցանի։„ Սկիզբն. “Աստուած բարձրեալ ահաւոր, անքննին։„

* 20. Թղ. 260a. “Եփրեմի ասացեալ բանք աստուածայինք եւ զղջական եւ պիտանի ամենայն կրաւնաւորի։„ Սկիզբն. “Տես տէր զտառապանս իմ եւ զցաւս հոգւոյս իմոյ։„

* 21. Թղ. 300a. “Նորին սրբոյ Եփրեմի աղաւթք։„ Սկիզբն. “Տէր Աստուած զօրութեանց աղաչեմ զքեզ որ մեծդ ես։„

* 22. Թղ. 309a. “Նորին Եփրեմի ասացեալ աղաւթք։„ Սկիզբն. “Տէր երկնի եւ երկրի, իշխան մահու եւ կենաց։„

Հմմտ. Թիւ 14, 4։

23. Թղ. 314b. “Բենիկ վարդապետի ասացեալ առ հրեշտակս եւ հրեշտակապետս։„ Սկիզբն. “Անկանիմ առաջի ամենայն դասակարգութեանց։„

24. Թղ. 316a. “Աղաւթք Մեսրոպայ վարդապետի ասացեալ առ սուրբ աստուածածինն։„ Սկիզբն. “Բարեբանեալ եւ փառաւորեալ ամենասուրբ կոյս։„

25. Թղ. 318a. Դաւանութիւն։ Սկիզբն. “Խոստովանիմ զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին։„

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ։ 1. Թղ. 17a. կարմրաւ. “Զտոպտող տառիս զՆորագէս եւ զմեղաւք մեռեալ զոգիս զՅՈՀԱՆՆԷՍ (գրիչ) յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր։„ Այս յիշատակագիրն այլեւայլ ձեւով կը կրկնուի (Թղ. 126b, 144b, 260a)։

2. Թղ. 239b. ի լուսանցս. “Զմեղի տոպտող տառիս զՅՈՎՀԱՆՆԷՍ օբեղա աղաչեմ յիշել ի լուսազարդ աղաւթս ձեր„ եւն։

3. Թղ. 242b—243a, ի լուսանցս կարմրագիր. “Չէ ի կարգէ տողերդ. Գաբրիէլ այր Աստուծոյ կամ պատկեր առի. բ. Միքայէլ որպէս զԱստուած կամ հզաւր. գ. Ռափայէլ բժշկութիւն. դ. Անաէլ լրումն Աստուծոյ. ե. Ուրիէլ տեսումն Աստուծոյ. զ. Դանիէլ ինքն Աստուած. է. Բարքիէլ. սկիզբն աստուածայնոյ. ը. Ազոնիէլ Տեառն իմոյ Աստուծոյ. թ. Փանուէլ յայտնութիւն Աստուծոյ։„

4. Թղ. 259a յիշատակարան ոտանաւոր։ “Աբեղակն ... ծաղկեա զշյոդ Աստուածութեան ի յոգիս քո ծառայի Ներսէսի ... տացողի այսմ տառի եւ Եղբաւր որդոյ Անանիայի գծագրողի այս մատենիս։ ... ... Յիշեսջիք եւ զհեզահոգի եղբայրն մեր ըստ հոգւոյ զԹումաս կրօնաւորն ի տէր եւ զամենայն երախտաւորս„ եւն։

5. Թղ. 318b. Գլխաւոր յիշատակարան. “Ո՛վ քրիստոսազգեաց մանկունք որք ի լուսաւոր եւ յաստուածային հոգեշահ պատուիրանացս աւգտիկք ընթեռնմամբ եւ կամ աւրինակելով, զտառացաւղ սորա զանարժան եւ քահանայ զՆորագէս հոգւս եւ զԱնանիա գրիչս եւ զծնաւղսն մեր եւ զամենայն երախտաւորսն մեր յամենայն պէտս մեր յիշեսջիք մեղաց թողութեամբ ի տէր. ընդ նմին եւ զհեզահոգի եղբայրն մեր ըստ հոգւոյ զԹումաս կրաւնաւորն. աղաչեմ սրտի մտաւք„ եւն։

digitised by A.R.A.R.@

"Ցամի ՌԺԳ յամսեանն յունիս ԺԵ եղեւ զրաւ-գրչութեան ալաւթական բանիցս սրբոյն Ներսեսի Կլայեցւոյն եւ Գրիգորի ակնեւացւոյն եւ Եփրեմի խորին ասորոյ ի քաղաքս Էլեվոյ. յանապատս որ կոչի սուրբ Կէորակոս ընդ հովանեաւ սորին տաճարի՝ եւ կենսակիր եւ աստուածընկալ սուրբ նշանիս. եւ այլ բազում նշխարաց որ աստ կան եւ են բարեխօս վասն մեր ի Քրիստոս Աստուած ի տէր մեր որ է աւրհնեալ:„

6. Թղ. 319b. (ստորեւ՝ ի վեր.) "Ցաղագս մինչեւ ի ջրհեղեղ„ եւն. էջ մը ժամանակագրութիւն . . : "Կալ ի յայտնութենէ հայոց մինչեւ յելս նաւատորդի ամսոյ եւ չորեքպատկեա եւ այն է լրումն լուսնին„ եւն:

# 11.

[Cod. Arm. 11.]

## ՌԾԷ = 1608էն յառաջ:

*ԹՈՒՂԹՔ 541: — ՄԵԾՈՒԹԻՒՆ 27×20 cm. — ԳՐՈՒԹԻՒՆ երկսիւն 21×14 cm. — ՏՈՂՔ 37: — ՆԻՒԹ. Թուղթ հաստ եւ պինդ եւ փայլուն: — ԿԱԶՄ. փայտակազմ կաշեպատ, արեւելեան ոճով: — ՀԱՆԳԱՄԱՆՔ. մաքուր եւ լաւ: — ԳԻՐ. նոտրգիր նրբագոյն, ոչ մաքուր, այլեւայլ ձեռքէ: — ՎԵՐՆԱԳԻՐՔ եւ ԽՈՐԱԳԻՐՔ կարմրաւ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐՔ: — ԶԱՐԴԱԳԻՐՔ (թուով 27), ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ (թուով 18), ԹՌՉՆԱԳԻՐՔ (թուով 7:) — ԽՈՐԱՆ հատ մը կայ: ԿԻՍԱԽՈՐԱՆՔ ամէն գրոց սկիզբը: — ԼՈՒՍԱՆՑՔԻ գծերը կարմիր, եւ վրան թիւր գլխոյ, նիւթ գրոց եւ այլ նմանիք նշանակուած: — ԴԱՏԱՐԿ 4 թուղթ սկիզբէն եւ չորս վերջէն, եւ թղ. 508b, 541b եւ այլ սիւներ: — ԺԱՄԱՆԱԿ, անյայտ, բայց շատ յառաջ քան զամն ՌԾԷ (= 1608), երբ գնեց այս գիրքը Տէր Աբրահամ կրաւնաւորէն Յակոբ երէց: — ԳՐԻՉՆ. Տէր Աբրահամ "սէլոմցի:„ — ՏԵՂԻ. անշուշտ "Սէլով.„: — ՏԷՐ. Տէր Աբրահամ եւ Յակոբ երէց: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. թղ. 251b. 281a, 362b, 407a, 540a, եւ այլ անթիւ կրկնութիւնք: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ: (Թղ. 1.) այսպէս ճշդիւ „Ex libris spectabili Stephani Athanovicz consuli Zamoscensi Anno Domini 1696.„*

* Մատեանս է Աստուածաշունչ, բայց մէջը կան եւ այլ շատ գրութիւնք, ոմանք շատ ընտիր օրինակէ.

Ա. 1. Թղ. 1a. Նախադրութիւն Ծննդոց գրոց եւ Ցանկ.

Թղ. 2a. Գիրք Ծննդոց.

2. Թղ. 29a. Նախադրութիւն Ելից եւ Ցանկ:

Թղ. 32b. Գիրք Ելից.

3. Թղ. 51a. Նախադրութիւն Ղեւտականին եւ Ցանկ.

Թղ. 53b. Ղեւտական գիրք.

4. Թղ. 66b. Նախադրութիւն Թուոց եւ Ցանկ:

Թղ. 68b. Թիւք:

5. Թղ. 91a. Նախադրութիւն երկրորդ օրինաց եւ Ցանկ:

Թղ. 92b. Երկրորդումն օրինաց:

6. Թղ. 110a. Նախադրութիւն Գրոց Յեսուայ եւ Ցանկ:

Թղ. 111a. Յեսու որդի Նաւեայ.

7. Թղ. 125a. Նախադրութիւն Գրոց Դատաւորացն եւ Ցանկ:

Թղ. 125b. Դատաւորք.

8. Թղ. 138b. Նախադրութիւն եւ Գիրք Հռութայ.

9. Թղ. 140a. Յառաջաբան նախակարգեալ թագաւորութեանց եւ Նախադրութիւն գրոց նախակարգեալ չորս գլխոցն եւ Ցանկ.

10. Թղ. 142a. Առաջին թագաւորութեանց.

11. Թղ. 161a. Թագաւորութեանց երկրորդ:

12. Թղ. 177b. Թագաւորութեանց երրորդ:

13. Թղ. 197b. Թագաւորութեանց չորրորդ:

14. Թղ. 214b. Նախադրութիւն առաջին եւ երկրորդ Մնացորդաց եւ Ցանկ:

15. Թղ. 215b. Մնացորդաց առաջին.

16. Թղ. 233a. Մնացորդաց երկրորդ:

17. Թղ. 251a. Նախադրութիւն Եզրի եւ Ցանկ:

Թղ. 251b. Գիրք Եզրի առաջին.

18. Թղ. 261b. Համգամանք գլխոց երկրորդ Եզրայ.

Թղ. 261b. Եզրա երկրորդ.

19. Թղ. 267a. Նախադրութիւն Նեեմիայ:

Թղ. 267b. Բանք Նեեմիա որդւոյ Աքաղեա.

20. Թղ. 275b. Նախադրութիւն եւ Գիրք Եսթերայ:

21. Թղ. 282b. Նախադրութիւն եւ Գիրք Յուդիթայ.

22. Թղ. 291b. Նախադրութիւն եւ Գիրք Տովբիթայ.

23. Թղ. 298a. Նախադրութիւն առաջին Մակաբայեցւոց:

Թղ. 299a. Գիրք առաջին Մակաբայեցւոց.

24. Թղ. 321b. Նախադրութիւն երկրորդ Մակաբայեցւոց:

Թղ. 323a. Մակաբայեցւոց երկրորդ.

25. Թղ. 339b. Նախադրութիւն երրորդ Մակաբայեցւոց:

Թղ. 340a. Երրորդ Մակաբայեցիք.

26. Թղ. 346b. Նախադրութիւն Յոբայ արդարոյ:

Թղ. 347a. Գիրք երանելի նահապետին Յոբայ եւն.

27. Թղ. 363a. Սաղմոսք Դաւթի. կանոններու բաժնուած, որոնց իւրաքանչիւրին գլուխն վերնագիրք կան գրուած. զ. օ. Երկրորդ կանոնի ("Մի՛ նախանձիր„) այսպէս. "Առ այնոսիկ որ նախանձին ընդ չարագործս եթէ փարթամք են. առաջնորդք եւ առողջ են մարմնով խրատէ Դաւիթ եւ ասէ.„ Նոյնպէս եւ այլոց ճակատը գրուած կան վերնագիրք, եւ բովանդակը բաժնուած է Ջ. կանոն.

28. Թղ. 398b. Աղօթք Յովնանու մարգարէին:

29. Թղ. 403b. Աղօթք Մանասէի թագաւորին.

30. Թղ. 404a. Գիրք Սիրաքայ որ կոչի Յեսու.

31. Թղ. 414b. Առակ Սողոմոնի.

Թղ. 421a. Առակք Սողոմոնի զոր գրեցին բարեկամք Եզեկիայ արքայի Հրէաստանի: Սկիզբն. "Փառք Աստուծոյ ծածկեն զբան, փառք թագաւորի պատուեն զհրաման:„

32. Թղ. 423a. Բանք Ժողովողի որդւոյ Դաւթի թագաւոր Իսրայէլի Եկլեսիաստես.

33. 426a. Նոր երգոյ որ է Օրհնութիւն Օրհնութեանց։

34. Թղ. 427b. Իմաստութիւն Սողոմոնի։

35. Թղ. 433b. Գիրք Եսայեայ մարգարէին։

36. Թղ. 452b. Մարգարէութիւն Երեմիայի։

37. Թղ. 471b. Գիրք Բարուքայ։

38. Թղ. 473b. Ողբոյն Երեմիայի մարգարէի ողբ։

39. Թղ. 477b. Գիրք Եզեկիէլի։

40. Թղ. 498b. Գիրք Դանիէլի։

41. Փոքր Մարգարէք։ — Թղ. 509a. Ովսէէ։ — Թղ. 512a. Յովէլ։ — Թղ. 513b. Ամովս։ — Թղ. 515b. Աբդիու։ — Թղ. 516a. Յովնան։ — Թղ. 517a. Միքիա մորասթացի։ — Թղ. 518b. Նաում։ — Թղ. 519b. Ամբակում։ — Թղ. 520b. Սոփոնիա։ — Թղ. 521b. Անգէոս։ — Թղ. 522b. Զաքարիա։ — Թղ. 527a. Մաղաքիա։

Բ. Առանձին զատ կան գրոց մէջ.

* 1. (42.) Թղ. 361a. “Երանելոյն Եղիշէոսի եպիսկոպոսին Կիպրոսացւոյ Յաղագս Երէցոյ Սաղմոսարանին։„ Սկիզբն. “Զամենայն ինչ զոր ասաց Հայրն մեր։„

2. (43.) Թղ. 412a. Սիրաքայ գրքէն վերջն այս անուամբ կայ. “Խրատք իմաստասիրաց„։ Սկիզբն. “Ճանապարհորդք ի տունս եւ ի հայրենիս իւրեանց փութան։„ Լուսանցքը ԽԴ. գլուխ կը նշանակէ, եւ այս կը շարունակուի նաեւ յաջորդայ մէջ։

3. (44.) Թղ. 413a. “Պղտորանք ասացեալ է։„ Սկիզբն. “Ամենայն մակացութիւն առաջեալ յարդարութենէ։„

4. (45.) Թղ. 413b. “Դիմօսթենէս հոգի քաղաքաց ասէ զօրէնս դնել։„ Սկիզբն. “Զօրէնս դնել եւ որպէս մարմին զերկել ի հոգւոյ։„ — Թղ. 414a, ԽԹ. “Զելեւկոս ասէ։ Յորմէ պատուիրեցաւ եւ ամենայն այսպիսի քաղաքաց եւ քաղաքուհեաց„ եւն։

5. (46.) Մահք Մարգարէից։ ա) Թղ. 451b. Մահ Եսայիայ որդւոյ Ամովսայ։ — բ) Թղ. 497b. Մահ Եզեկիէլի մարգարէի։ — գ) Թղ. 506a. Մահ Դանիէլի մարգարէի։ — դ) Թղ. 511b. Մահ Ովսէէ մարգարէի։ — ե) Թղ. 513a. Մահ Յովելայ։ — զ) Թղ. 515b. Մահ Ամովսայ։ — է) Թղ. 516a. Մահ Աբդիու։ — ը) Թղ. 516b. Մահ Յովնանու մարգարէի։ — թ) Թղ. 518b. Մահ Միքիայ։ — ժ) Թղ. 519b. Մահ Նաումայ։ — ժա) Թղ. 520a. Մահ Ամբակումայ։ — ժբ) Թղ. 521b. Մահ Սոփոնիայ։ — ժգ) Թղ. 522b. Մահ Անգէոսի։ — ժդ) Թղ. 526b. Մահ Զաքարիայ։ — ժե) Թղ. 528b. Մահ Մաղաքիայ։ — ժզ) Թղ. 528b. Մահ Երեմիայ մարգարէի։

6. (47.) Թղ. 451b. “Նախադրութիւն Սուրբ մարգարէին Երեմիայի ասացեալ Մխիթար վարդապետէ։„

7. (48.) Թղ. 476b. “Յառաջաբան ի վերլուծութիւն մարգարէութեան Եզեկիէլի. Եսայեա վարդապետէ ասացեալ։„ Սկիզբն. “Աստուածային առաջագործ բանին կրկին . . .„

8. (49.) Թղ. 497b. “Մեկնութիւն Նախադրութեան զոր արարեալ է հոգեկիր առն Վարդան վարդապետի ի լուսաւոր մեկնչաց։„ Սկիզբն. “Մերձաւորք մեր եղբարք մեր եւ որդեակք մեր յօժարեցին։„

* 9. (50.) Թղ. 507a. “Տեառն Ներսէսի արքեպիսկոպոսի Տարսոնի Նախադրութիւն երկոտասան մարգարէից զոր ի թելադրութենէ աբբա Եփրեմի Խ-կորդէ եւ յիւրոց յարեւլուածոց մասնց գեղեցկայարմար յետեւեալ իբրեւ ոսկի ընդ սարդիոն։„ Սկիզբն. “Յար եւ մերձաւոր վկայն գրոց բնաւորական բնութիւնք։„

10. (51.) Թղ. 528b. “Գիրք Մնացորդաց։ ա) Խաւսք Ռուբէնի առաջնոյ։ Հրաման կտակի Ռուբէնի զոր պատուիրեաց որդւոց իւրոց։„ Սկիզբն. “Զկնի երկրորդ ամի վաղճանեցելոյն Յովսեփայ։„

բ) Թղ. 530a. Կտակ Շմաւոնի վասն նախանձու։

գ) Թղ. 531a. Կտակ Ղեւեայ վասն քահանայութեան եւ ամբարտաւանութեան։

դ) Թղ. 533b. Կտակ Յուդայի վասն յարութեան եւ արծաթսիրութեան եւ պոռնկութեան։

ե) Թղ. 535a. Կտակ Իսաքարայ։

զ) Թղ. 535b. Կտակ Զաբուղոնի։

է) Թղ. 536a. Կտակ Դանայ վասն ամբարտաւանութեան եւ ատելութեան։

ը) Թղ. 536b. Կտակ Նեփթաղիմայ վասն բնական բարութեան։

թ) Թղ. 537b. Կտակ Գադայ վասն ատելութեան։

ժ) Թղ. 538a. Կտակ Աշերայ վասն երկդիմութեան։

ժա) Թղ. 538b. Կտակ Յովսեփայ վասն նախանձու եղբարցն։

ժբ) Թղ. 539b. Կտակ Բենիամենի։

Թղ. 533b—540a. խիտ գիր է, այնպէս որ 55էն աւելի տող կայ ամէն սեան մէջ։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ։ 1. Թղ. 251b. “Զստացող սորա զփցուն Տէր զնուաստ Տէր Աբրահամ կրօնաւորն օհանեսն եւ զՄեծն լուսարարն յիշեցէք առ Տէր Աստուած մեր եւ Աստուած զձեզ յիշէ։„

2. Թղ. 281a, գրիչը դատարկ թողուցած է քանի մը տող իւր առջեւ ունեցած օրինակին մէջ եղծեալ եւ անընթեռնլի գտնելով, եւ կը յաւելու թէ “Ով ընթերցող անմեղադիր լեր այդ տեղի պակասութենէն զի աստուածաշունչիս մէջն եղծըվել էր եւ անտի պարապ թողաք զայս սակաւ տեղս։„ Ուրիշ մէկն ալ նոյն պարապը լեցընելով տակն աւելցուցեր է. “Ով գրիչ մի հոգար, ահա լցաք զթերին,„ իւր այս խօսքը գրելով։

3. Թղ. 362b. “Ով հոգեւոր հայր եւ եղբարք . . . յիշեցէք զանարժան կրօնաւորս սուտանուն զտէր աբրահամ օէշօվցիս եւ զծնօղս իմ զտէր խաչատուր եւ զմեծ պապս իմ զտէր վարդան եւ Աստուած եւն„։ Այս կը կրկնուի նաեւ այլուր։

4. Թղ. 407a ի լուսանցս. “ի հօս պակաս է շատ որ լաթինն լման ունի։„ Այլ ձեռք վրան գրած է. “Այլ օրինակ տեսաք նայյ այսպէս էր եւ ոչ է պակաս։„

5. Թղ. 540b. “Փառք . . . Յորժ փափագէի աստուածաշունչ բուրաստանիս. որ է սա օրէնք եղեալ յԱստուածոյ. եւ կտակ նահապետաց եւ մարգարէութիւնք նախատեսացն. որ զսկիզբն աշխարհի եւ զկա-

digitised by A.R.A.R.@

տարուլն Նորին բացատրէ մեզ եւ զի շատ ջանիւք ջանացի գրել եւ ոչ գտանէի գեղեցկագոյն սորա որ մինչ է գտանել խնդրեալ ասա եւ անդ ոչ կարացի ի ձեռն բերել։ Ցետ այսորիկ եկն առ իս սիրելի եւ կարգակից եղբայրն մեր Տէր Աբրահամ կրօնաւորն զոր առացեալ էր զսա վասն իւր. եւ տեսեալ զփափաք ցանկութեան սրտի իմոյ, շնորհեաց մեզաւորիս զսա. սակաւ ինչ ընկալեալ ի ձեռանէ իմմէ․․․։ Արդ ես անարժան եւ մեղօք զառածեալ Յակովբ երէցս առացայ զսա ի թվաբերութեան արեթական տումարիս ՌՃՁԲ եւ ի թիւ յաւելորդի յամսեան հոկտեմբերի. ի ժամանակս թագաւորութեանն Իլախաց Չինգիզեան երրորդի. եւ հայրապետ Հայոց ու ՏԷր ի սուրբ Էջմիածինն որ նստէր յաթոռ սուրբ լուսաւորչին եւ հովուէր զժողովուրդ Նորին վասն պատերազմացն որ կայր ի մէջ պարսից եւ խոմաեցլացոյ։․․․ (Ուղիղ վասն ուղիղ եւ ճանա ճռոլուժեալ։) Արդ երես անկեալ աղաչեմ զձեզ զամենեսեանդ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով յիշեցէք ի մաքրեցեալ յաղօթս ձեր զանարժան Յակոբս միով աստուած ողորմիւ որ մեծաւ փափաքանօք առացա եւ ծողկեցի եւ կոզեցի անվարժ գրչով այսմ արհեստի. այլ եւ մի մոռանաք զհայրն իմ զԱլթունն որ թարգմանի ոսկի. եւ զմայրն իմ զԱննան եւ զմեծ պապն իմ զԱստուածատուրն եւ զամենայն արեան մերձաւորսն իմ. եւ զուսուցիչն իմ զտէր Յակոբ քահանայն եւ զտէր Աբրահամ կրօնաւորն որ շնորհեաց զսա Ձեզ յիշողացդ եւ մեզ յիշելոցս. ողորմի Աստուած աՀեղ աւուր դատաստանի եւ Նմա փառք յաւիտեանս ամէն։»

(Շարունակելի։)

---

### ՄԻՀՐԱՆ ՊԷՅ ՏԻՒԶ †

Քանի մ'ամիս յառաջ, երբ Հանդէսը մէջ Տիւզեան Միհրան պէյի համառօտ կենսագրութիւն մը կը գրուէր, որ պսակն էր Տիւզեան ազնուական ազգատոհմին համառօտ ազգաբանութեան, կը մաղթէր Հանդէսս որ "Երկինք իրեն դեռ երկար օրեր հաճին պարգեւել"։ Սակայն այս մեր իղձքն ու մաղթանքն Բարձրեալն այլազգ ուզեց տրամադրել, եւ այսօր ցաւով կը ստիպուինք գուժել այն մեծ կորուստը՝ զոր ունեցաւ Կ. Պոլսոյ Հայ հասարակութիւնն յանձին արդիւնաշատ գլխոյն Տիւզեանց ազնուական ազգատոհմին, եւ Հայ ազգն իսկ յանձին այսպիսի մեծանուն Մեկենասի մը, որ կնքեց իւր մահկանացուն ի 22 դեկտեմբերի 1890։

Մեծաշուք հանգուցելոյն կենսագրութիւնն արդէն քանի մ'ամիս յառաջ հրատարակած է Հանդէսս, որուն պէտք է այժմ յաւելուլ եւ զայն, որ Միհրան Պէյ Տիւզեան բաց ի պետութեան եւ Ազգին հրապարակական գործունէութեամբ ըրած մեծամեծ ծառայութիւններէն՝ մեծապէս նպաստամատոյց եղաւ նաեւ կրթական եւ մատենագրական գործունէութեան ծաղկելուն՝ բանալով դպրոցներ եւ նպաստելով այլեւայլ հրատարակութեանց. պէտք են այս տեղ յիշուիլ ի մասնաւորի Օրիորդաց վարժարանին հաստատութիւնն ի Կ. Պոլիս, եւ իւր ծախիւք եղած հրատարակութիւնն Հ. Արսէն Վ. Բագրատունւոյ ընդարձակ դիւցազներգութեան, եւ այլ գործոց։ Այսպիսի մեծամեծ գործովք ակաղձուն կեանքն արժանի է երախտագիտական զգածմանց ազգին կողմանէ, եւ անտարակոյս ի մասնաւորի Հայ մատենագրութեան պատմութիւնը իրեն արժանի տեղը պիտի շնորհէ Տիւզեան Միհրան Պէյի ի շարս Հայ գրականութեան այլ Մեկենասներու։

Հանգուցեալ Վսեմ. Պէյին վշտացեալ գերդաստանին կը յայտնենք մեր խորին ցաւն ու վշտակցութիւնն, եւ կը հայցենք մխիթարութիւն ի Բարձրելոյն։

---

### ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ †

Շատ ժամանակ չէ որ հայերէն մատենագրութիւնը մեծ կորուստ ունեցաւ յանձին Ք. Պատկանեանի. ասոր կը յաջորդէ այժմ Մկրտիչ Էմին, որ Դեկտեմբեր 13/25ին երկարատեւ հիւանդութենէ մ'ետեւ վախճանեցաւ։ Այս երկուքն թէեւ իրարմէ տարբեր տաղանդ եւ տարբեր ճիւղ ունէին, յայնմ նման էին իրարու որ երկուքն ալ հին հայ գրականութեան հետամուտ՝ իրենք եղան առաջին ներկայացուցիչ այս մասին Ռուսահայոց մէջ, երկուքն ալ մեծ ծառայութիւն մատուցին ազգային հին մատենագրութիւնը ծանօթացընելով եւրոպական գիտնոց։ Երկուքին ալ մեծ արդիւնքն մատենագրութեան պատմութիւնը պիտի գնահատէ։

Մկրտիչ Յովսէփեան Էմին Նոր Ջուղա ծնած եւ առաջին կրթութեան տարերքն Կալկաթայի "Մարդասիրական ճեմարանի" մէջ ընդունած, եւ ապա շատ աշխարհներ շրջած էր, երբ 1829ին 16 տարեկան Մոսկուայի Լազարեան ճեմարան մտաւ. այս ժամանակ արդէն բաց ի մայրենի լեզուէն, գիտէր անգղիերէն եւ պարսկերէն։ Այնուհետեւ իւր գործունէութեան բոլոր ընթացքը սերտ կապուեցաւ սոյն դպրոցին հետ, ուր նախ իբրեւ ուսուցիչ եւ ապա իբրեւ տեսուչ գործեց կէս դար ամբողջ։ Իւր յիսնամեայ գործունէութեան յոբելեանը կատարուեցաւ չքեղութեամբ 1886, ապրիլ 17/29ին։ Այս առթիւ ընտրուեցաւ նաեւ անդամ շատ մը գիտնական հաստատութեանց, այսպէս Մոսկուայի Համալսարանի պատուոյ անդամ, Ռուս Հնագիտական ընկերութեան գործօն անդամ,